



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱԿԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

24.06.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 8 անդամները:

Բացակայում են Հ.Գրիգորյանը, Գ.Մելիքյանը, Ն.Վարդանյանը, Ն.Բաբայանը, Տ. Եփրեմյանը, Ս.Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանչյանը, համայնքի գլխավոր խորհրդական Վ. Զիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Ա. Ծերունյանը, Ա.Ջաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

- Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի օրակարգը՝
1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
 2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
 3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
 4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
 5. Հողամասի վարձակալության պայմանագրում լրացում կատարելու մասին:
 6. Քաղաքացիներ Հրաչիկ, Անահիտ, Համլետ և Արուսիկ Ալոյաններին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-067-0122-0030 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով և 07-067-0113-0026 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0117-0025 կադաստրային ծածկագրով 1,35722 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության համարժեք հողամասի հետ փոխանակելու մասին:
 7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

8. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության» ՊՈԱԿ-ին տրամադրելու մասին:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -8

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Ձեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ **առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշման մեջ կատարել ներկայացվող փոփոխությունները և լրացումները:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 7-րդ թաղ., 16 շենքի 10 բն. բնակիչ **Վիկտոր Լևոնի Ղազարյանի** 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 1950-16, Չարենցավան համայնքի Ֆանտան գյուղի 4-րդ փող., 61տուն. բնակիչ **Կառլեն Վարդանի Գրիգորյանի** 2022 թվականի մայիսի 30-ի թիվ 2177-16, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 8-րդ թաղ., 13-րդ շենքի, 6-րդ բն. բնակիչ **Դավիթ Գնելի Ընդոյանի** 2022 թվականի մայիսի 4-ի, Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 3-րդ թաղ. 20-րդ շենքի 2-րդ բն.բնակիչ **Գրիշա Վալոդի Անտոնյանի** 2022թ. հունիսի 22-ի և «Անդոկ» մշակույթի կենտրոնի հիմնադիր-ղեկավար **Հրայր Փարսադանյանի** 2022թ. մայիսի 5-ի դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝**առաջարկում եմ.**Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել բնակիչ **Վիկտոր Լևոնի Ղազարյանին**, Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Կառլեն Վարդանի Գրիգորյանին**, Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել **Դավիթ Գնելի Ընդոյանին**, Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200 հազ. դրամ հատկացնել **Հրայր Վահիկի Փարսադանյանին**, Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150 հազ. դրամ հատկացնել **Գրիշա Վալոդի Անտոնյանին**:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու և վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Ջեյ.Ք.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 67-րդ և 76-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **առաջարկում եմ**.
1. Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարել և վարձակալությամբ տրամադրել՝ համաձայն հավելված N 1-ի, N 2-ի/կցվում է/:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Ջեյ.Ք.Բալբաբյան/

Ղեկավարվելով Հոդային օրենսգրքի 66-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **առաջարկում եմ** . Թույլատրել Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը ուղղակի վաճառքով օտարելու համաձայն հավելվածի:/կցվում է/

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Հողամասի վարձակալության պայմանագրում լրացում կատարելու մասին:

/Ջեյ.Ք.Քալբաբյան/

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627-րդ հոդվածի 2-րդ մասի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը՝ 2004 թվականի ապրիլի 13-ին Ղազարոս Վալերի Գրիգորյանի հետ կնքած պայմանագրում լրացում կատարելու և գնման նախապատվության իրավունք ավելացնելու մասին **առաջարկում եմ**. . Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և 2004 թվականի ապրիլի 13-ին Ղազարոս Վալերի Գրիգորյանի հետ կնքած պայմանագրում կատարել համապատասխան լրացում, ինչպես նաև ավելացնել գնման նախապատվության իրավունք:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. Քաղաքացիներ Հրաչիկ, Անահիտ, Համլետ և Արուսիկ Ալոյաններին համարեղ սեփականության իրավունքով պատկանող 07-067-0122-0030 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով և 07-067-0113-0026 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0117-0025 կադաստրային ծածկագրով 1,35722 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության համարժեք հողամասի հետ փոխանակելու մասին:

/Ջեյ.Ք.Քալբաբյան/

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 589-րդ, 590-րդ, 592-րդ և Հողային օրենսգրքի 71-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Հրաչիկ Ալոյանի 2022 թվականի մայիսի 10-ի թիվ 1898/07 դիմումը, առաջարկում եմ. Տալ համաձայնություն քաղաքացիներ **Հրաչիկ, Անահիտ, Համլետ և Արուսիկ Ալոյաններին** համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-067-0122-0030 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով և 07-067-0113-0026 կադաստրային ծածկագրով 0,71 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0117-0025 կադաստրային ծածկագրով 1,35722 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության համարժեք հողամասի հետ փոխանակելու համար:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին

/Ձեկ.Հ.Ղազանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, 77-րդ հոդվածով և համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2010 թվականի հունվարի 19-ի թիվ 8-Ն որոշման, առաջարկում եմ.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու՝ համաձայն ներքոնշյալ քաղաքացու դիմումի:

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ՀԱՍՑԵՆ	ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ Է ՀԱՏԿԱՑՎՈՒՄ	ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ԿԱՄ ԱՆՀԱՏՈՒՅՑ
1.	Նարինե Ավետիսյան	3-1-89	1600 000	Սեփականություն	Անհատույց

Լսեցին.

Յ. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պամոնական միջավայրի պահպանության ծառայության» ՊՈԱԿ-ին տրամադրելու մասին:

/Ջեյ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 27.04.2022թ. թիվ 1-303 գրությունը և համայնքի ղեկավարի տեղակալ Հ.Ղազանյանի գեկուցագիրը **առաջարկում եմ**. Տալ համաձայնություն՝ Չարենցավան համայնքում գտնվող «Անվերջության ժապավեն» հուշարձանի տարածքում տեղադրված տեսախցիկը և արևային էներգիայի համար անհրաժեշտ սարքավորումները՝ որպես նվիրատվություն, տրամադրելու «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին՝ «Բջնի ամրոց» պատմամշակութային արգելոցի տարածքում տեղադրելու և անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-8

դեմ-0 ձեռնպահ-0

Բարայան Վալերի

Գասպարյան Անատոլի

Դավթյան Կարեն

Երիցյան Գագիկ

Խլղաթյան Արսեն

Վարդանյան Նորայր

Պողոսյան Մնացական

Փանոսյան Արթուր

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Ս.Ս.Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

